

1285

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԾՐԱԳՐԵՐ

ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ՄԻՋԻՆ ԳԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

V—VII ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

9(3)
Մ-73

ԼՈՒՍՃՐԱՏ

1940

30 MAY 2011
2 SEP 2006

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՄՈՍ

9(3) *այ*
Ս-73

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԾՐԱԳՐԵՐ

ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ՄԻՋԻՆ ԳԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Վ—ՎԻ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԼՈՒՍՀՐԱՏ

ՅԵՐԵՎԱՆ


1940

01 JUL 2013

Գործարանի և խմբագրիչ՝ Խ. Մանույան
Տեխ. խմբ. և սրբագրիչ՝ Ար. Հովսեփյան

1285

Программы средней школы
История древнего мира
История средних веков
для V—VII классов



1486
40

Գլխավոր լիազոր՝ Բ—1017 Գառվեր № 816 Տիրած 2000

Պետերատի I տպարան Յերեան, Լենինի № 65

Հին Աշխարհի Պատմություն

ԲԱՅԱՏՐԱԳԻՐ

V ՅԵՎ, VI ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հին աշխարհի պատմության ծրագրի բովանդակության մեջ մտնում են նախնադարյան— համայնական կարգի պատմությունը, հին Արևելքի, Հունաստանի և Հռոմի պատմությունը: Այդ յերկրների պատմության կոնկրետ նյութի վրա սովորողները պետք է ուսումնասիրեն անտիկ հասարակության պատմությունը — «Մարդու կողմից մարդուն հասարակության առաջին ձևը, դասակարգերի—ստրկատերերի և ստրուկների բաժանվելու առաջին ձևը»¹⁾

Հին աշխարհի պատմության դասընթացի նպատակն է հին Արևելքի առանձին յերկրների — Յեդիպոսի, Միջագետքի, Հնդկաստանի և Չինաստանի պատմության, Հունաստանի և Հռոմի պատմության կոնկրետ նյութի վրա սովորողներին հանդեպնել Վ. Ի. Լենինի հետևյալ արտահայտության ըմբռնմանը. «Մարդկային բոլոր հասարակությունների զարգացումը հազարամյակների ընթացքում անխտիր բոլոր յերկրներում ցույց է տալիս մեկ այդ զարգացման ընդհանուր որինաչափությունը, կանոնավորությունն ու հաջորդականությունն այն ձևով, յոր սկզբում յեղել է առանց դասակարգերի հասարակություն — սկզբնական նահապետական, նախնադարյան հասարակություն, յորի մեջ ազնվականությունն է յեղել. այնուհետև՝ հասարակություն՝ հիմնված բորություն վրա, ստրկատիրական հասարակություն... Մտրկատերեր և ստրուկներ—ահա

1 Լենին. Պատմության մասին. Յերկերի վեցհատորյալի մեջ. հատոր 6-րդ, էջ 380

առաջին խոչոր բաժանումը՝ դասակարգելի: Առաջին Խումբը տիրել է վո՛չ միայն արտադրութեան բոլոր միջոցներին — հողին, գործիքներին, վորքան էլ սրանք ան ժամանակ պրիմիտիվ լինեցին, այլ նա տիրել է նաև մարդկանց: Այդ Խումբը կոչվում էր ստրկատերերի խումբ, իսկ նրանք, ովքեր աշխատում էին և աշխատանքը տալիս էին արիշներին, կոչվում էին ստրուկներ»¹⁾:

Ստրկատիրական կարգերի, վորպես արտադրական հարաբերութեւոյնների հիմնական տիպերից մեկի հիմնական դժեւը սպառիչ խորութեամբ մատնանշված են «Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցութեան պատմութեայի համառոտ դասընթաց»-ի²⁾ մեջ:

«Ստրկատիրական կարգերում արտադրական հարաբերութեւոյնների հիմք հանդիսանում է ստրկատիրոջ սեփականութեւոյնն արտադրութեան միջոցների, ենչպես նաև արտադրութեան աշխատողի՝ ստրուկի նկատմամբ, վորին ստրկատերը կարող է վաճառել, գնել, սպանել, ինչպես անասունի: Այդպիսի արտադրական հարաբերութեւոյնները հիմնականում համապատասխանում են արտադրողական ուժերի դրութեանն այդ ժամանակաշրջանում: Քարե գործիքների փոխարեն մարդիկ այժմ իրենց արամադրութեան տակ ունեցին մետաղե գործիքներ, մաւրացիկային և պրիմիտիվ վորսորդական տնտեսութեան փոխարեն, վորը չգիտեր վո՛չ անասնապահութեւոյն, վո՛չ էլ հողագործութեւոյն, յերևան յեկան անասնապահութեւոյն, հողագործութեւոյն, արհեստներ, աշխատանքի բաժանում արտադրութեան այդ ճյուղերի միջև, յերևան յեկա՞վ առանձին անհատների ու հասարակութեւոյնների միջև պրոդուկտների փոխանակութեւոյն կատարելու հնարավորութեւոյն, հարատեւութեւոյնը փոքրաթիվ մարդկանց ձեռքում կուտակելու հնարավորութեւոյն, արտադրութեան միջոցների իրական կուտակումը փոքրամասնութեան ձեռքում, փոքրամասնութեան կողմից մեծամասնութեւոյն իրեն յենթարկելու և նրանց ստրուկներ դաժնելու հնարավորութեւոյն: Այստեղ արդեն չկա հասարակութեան բոլոր անդամները ընդհանուր և ազատ աշխատանք արտադրութեան պրոցեսում,

— այստեղ տերապետում է չախատող ստրկատերերի կողմից շահագործվող ստրուկների հարկազիր աշխատանքը: Ուստի և չկա արտադրութեան միջոցների, ինչպես նաև արտադրութեան պրոդուկտների ընդհանուր սեփականութեւոյն ևս: Նրան փոխարինում է մասնավոր սեփականութեւոյնը: Այստեղ ստրկատերն առաջին և հիմնական լիաթեք սեփականատերն է:

Հարուստներ և ջքավորներ, շահագործողներ և շահագործվողներ, լիիրավներ և իրավազուրկներ, դաժան դասակարգային պայքար նրանց միջև, — այս է ստրկատիրական կարգերի պատկերը»:

Ստրկատիրական կարգի բոլոր այս դժեւը պետք է աշակերտների կողմից յուրացվեն հին աշխարհի պատմութեան դասընթացի կոնկրետ նյութի վրա:

Հին աշխարհի պատմութեան դասընթացում սովորողների հետ ուսումնասիրելով հին Արևելքի յերկրներում և Հունաստանում տեղի ունեցած ստրուկների առանձին ապստամբութեւոյնները, ուսուցիչը պարտավոր է սովորողներին հանդեցնել ըմբռնելու, վոր այդ ապստամբութեւոյններից յորքանչոյրը յեղել է ստրուկների այն հեղափոխութեան առանձին ողակը, վորը յիկվիդացիայի յենթարկեց ստրկատերերին և վերացրեց շահագործման ստրկատիրական ձևը:

Հռոմի պատմութեան, ստրկատիրական հասարակութեան պատկարգային հակասութեւոյնների և Հռոմեյական պետութեան մեջ գլուղացիութեան հետ միասին ստրուկների կատարած ապստամբութեւոյնների նյութերի վրա ուսուցիչը պարտավոր է սովորողներին հանդեցնել ընկ: Ստալինի այն արտահայտութեան ընթրմանը, թե՛ «Ստրուկների հեղափոխութեւոյնը յիկվիդացիայի յենթարկեց ստրկատերերին և վերացրեց աշխատավորների շահագործման ստրկատիրական ձևը: Բայց դրանց տեղը նա դրեց ճորտատերերին և աշխատավորների շահագործման ճորտատիրական ձևը»¹⁾:

Ուսուցիչը միաժամանակ պարտավոր է պատմական կոնկրետ նյութի հիման վրա սովորողներին ցույց տալ նաև ստրկութեան դարդացման տարբեր աստիճանը հին Արևելքի յերկրներում և Հունաստանում:

1 Լենին. Պետութեան մասին. վեցհատորյակի 6-րդ հատոր էջ, 391
2 Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցութեան պատմութեան համառոտ դասընթաց, գլուխ IV էջ 167—168:

1 Ստալին ձեռնարկ արտասանած հարվածային կարտակոսակների համամիութենական I-ին համագումարում: Հրատ. Պետհրատի, էջ 9:

Պատմութիւնն դասավանդելիս ուսուցիչը պետք է յեւնի նրանից, վոր հին Արեւելքի պատմութեան ծրագրի մեթոդորդիական հիմքը՝ մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրների ուսմունքի վրա հիմնվող այն տեսակետն է, վոր հին Արեւելքի դասակարգային հասարակութիւնը ծագել է գոյութիւնն է ունեցել վորպէս ստրկատիրական հասարակութիւն՝ իր ամենավաղ, իսկ հետեւապէս և պրիմիտիւ վայն ձևով, վորը յենթադրում է համայնական հարաբերութիւնների մեծ կայունութիւն, դյուղացի համայնականների առկայութիւնն և պարտային ստրկութեան լայն ծավալում: Այս դրույթը պետք է դրվի հին Արեւելքի յերկրների պատմութեան պատմական կոնկրետ նյութի հիմքում, վորը շարադրվում է ուսուցչի կողմից դասերի ժամանակ: Այս տեսանկյունով ուսուցիչը պետք է յերևան հանի ստրկութեան աղբյուրները և տա հին Արեւելքի ստրուկների աշխատանքի շահագործման, դյուղացի համայնականների դրութեան, հասարակութեան սոցիալ-տնտեսական կարգի, դասակարգային պայքարի և կուլտուրայի կոնկրետ նկարագրութիւնը:

Հունաստանի և Հռոմի պատմութիւնը սովորողներին շարադրելիս, ուսուցիչը պարտավոր է յեւնել նրանից, վոր Հունաստանի և Հռոմի պատմութեան ծրագրի մեթոդորդիական հիմքը հանդիսանում է մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրների ուսմունքն անտիկ ստրկութեան մասին՝ վորպէս սոցիալ-տնտեսական Փորձացիայի վորն է տարբերութիւնն արեւելյան ստրկութիւնից, բնորոշվում է հետևյալ մոմենտներով. ստրկութիւնը վորպէս շահագործման յեղանակ առաջատար դեր է իրողում եկոնոմիկայում, վորպէս ստրուկներ ծառայում են առաջելապէս այլացեղները, անտիկ սեփականութիւնը տոհմականից վերջնականապէս վերածվում է համայնա-պետական, իսկ հետո ստրկատերերի անհատական սեփականութեան: Մեթոդորդիական այս սկզբունքի հիման վրա ուսուցիչը պետք է դասերի ժամանակ սովորողներին ցույց տա անտիկ ստրկութեան աղբյուրները, և տա Հունաստանի և Հռոմի անտիկ հասարակութիւնների ստրուկների աշխատանքի շահագործման, սոցիալ-տնտեսական կարգի, դասակարգային պայքարի և կուլտուրայի կոնկրետ նկարագրութիւնը:

Հին աշխարհի ուսումնասիրման միջոցով անհրաժեշտ է վոչ միայն պարզարանել ստրկատիրական հասարակութիւնների դար-

դացման ամբողջ որինաչափութիւնը և առաջադիմականութիւնը՝ համեմատած համայնա-նախնադարյան կարգի հետ, այլ և հն. դարյան այն ամբողջ կուլտուրական ժառանգութիւնը (գիտութիւն, դրականութիւն, արվեստ, փիլիսոփայութիւն), վորը մտել է կուլտուրայի և դիտելիքների համամարդկային դասձարանը: Դասավանդման ընթացքում անհրաժեշտ է աշակերտին հանդեցնել այն ըմբռնմանը, վոր մեր սոցիալիստական կուլտուրայում ևս շատ բան կա հին, հատկապէս հույների դիտութեան նվաճումներից, (Յիվլիդեսի յերկրաչափութիւնը, ճարտարապետական վոճեր, անտիկ թատրոն և այլն):

Ծրագիրը բաժանված է թեմաների. յարաբանչյուր թեմայի նյութը՝ յենթաթեմաների:

Յուրաքանչյուր յենթաթեմայում ցույց է արվում վոչ միայն ուսումնասիրման յենթակա վաւետական նյութը, այլև այն ուղղութիւնը, տեսանկյունը, վորով յենթաթեման պետք է շարադրվի սովորողներին: Այդ պետք է ողնի ուսուցչին պատմութեան դասերին իրականացնելու կոմունիստական դաստիարակութեան խնդիրները: Դասին նախապատրաստվելիս ուշադրութեամբ ուսումնասիրելով ծրագրի համապատասխան յենթաթեման, ուսուցիչը պետք է լավ կշռադատի դասի բովանդակութիւնը և ընթացքը վոչ միայն պատմական փաստերով այն հարեցնելու տեսակետից, այլև դասին ավանդվող նյութի կապակցութեամբ սովորողներին կոմունիստական դաստիարակութեան խնդիրների տեսակետից: Հին աշխարհի պատմութեան ծրագիրը կաղմված է դպրոցի ուսումնական պլանով պատմութեան դասավանդմանը հատկացված ժամերի վաստացի քանակութեան խիտ հաշվառման հիման վրա:

Վեցորչակում յերկրամայ պարապմունքների դեպքում, ուսուցիչը տարվա ընթացքում բնի 78 ժամ: Դրանցից յուրաքանչյուր դասարանում պատմութեան նոր նյութի ուսումնասիրման համար հատկացվում է 68 ժամ, կրկնութեանը՝ 10 ժամ: Կրկնութեան ժամերի միջ մտնում են տաւելերջի կրկնութեան ժամերը և ուսումնական տարվա ընթացքում անցած նոր նյութի կրկնութեան ժամերը: Անհրաժեշտ է, վորպէսզի ուսուցիչն անպայման անցկացնի կրկնութեան այդ դասերը և դրանք չզբաղեցնի նոր նյութի շարադրմամբ: Կրկնութեան յուրաքանչյուր դաս պետք է կառուցված լինի այնպէս, վորպէսզի ողնի սովոր-

բողներին հիշողութեան մեջ ամրացնելու վարդ թեմային վերաբերելու փաստական նյութը և հանդէսնի կրկնվող փաստական նյութի մարքսիստական ըմբռնմանը:

Հին աշխարհի պատմութեան դասընթացին հասկացված Ժամանակը (78 ժամ) հետեյալ կերպ է բաշխվում.

V ԴԱՍԱՐԱՆ.

- Ներածութիւն— 1 ժամ.
- Նախնադարյան մարդկանց կյանքը— 2 ժամ.
- Հին Արևելքը— 28 ժամ.
- Հին Հունաստանը— 37 ժամ.
- Կրկնութիւն— 10 ժամ.

VI ԴԱՍԱՐԱՆ.

(1-ին կիսամյակ)

- Հին Հռոմը— 36 ժամ.
- Կրկնութիւն— 3 ժամ.

ՄՐԱԳԻՐ

V Դասարան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ— 1 ժամ.

Ինչ է պատմութիւնը: Պատմութեան աղբյուրները—նյութական հուշարձաններ, պեղումներ: Գրավոր հուշարձանները: Ժողովրդական բանավոր ստեղծագործութիւնը: Հասկացողութիւն ժամանակագրութեան մասին:

ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՄԱՐԴԿԱՆՑ ԿՅԱՆՔԸ — 2 ժամ.

Հին քարե դարը և նախնադարյան հորդա: Անասնապահութեան և հողագործութեան յերևան գալը: Նոր քարե դար: Մայր-

իշխանութիւն և հայրիշխանութիւն: Բրոնզե դար: Անհալատարութեան յերևան գալը: Տոհմի քայքայվելը: Պետութեան կազմափոխվելը:

I-ին ԲԱԺԻՆ. Հին ԱՐԵՎԵԼԷ—28 ժամ

1. ՅԵԳԻՊՏՈՍ — 9 ժամ

Յեգիպտոսի բնութիւնը և բնակչութիւնը: Յեգիպտոսի աշխարհագրական դիրքը և բնութիւնը: Քարե դարը Յեգիպտոսում: Յեգիպտոսի հնագույն բնակչութիւնը և նրա զբաղմունքը: Հողագործութեան սկիզբը և նրա պրիմիտիվ բնույթը: Յեգիպտացիներին կյանքի համայնական բնույթը (նոմեր):

Յեգիպտական պետութեան կազմավորվելը: Հողագործութեան զարգացումը: Ջրաբաշխական կառուցումները և համայնքի անդամների ու ստրուկների աշխատանքի ոգտագործումը դրանց կառուցման համար: Յերկու թաղավորութիւնների կազմավորումը: Միասնական յեգիպտական պետութեան ծագումը և վտարման սխտեմի կենտրոնացումը:

Հին յեգիպտացիների կրոնը: Կենդանիների և բնութեան պաշտամունքը: Արեւի աստված Ռան: Ողիբիսի և Իդիզայի մասին ստապելը և նրա նշանակութիւնը: Յեգիպտացիների զբաղմունքների արտացոլումն իրանց կրոնական պատկերացումների մեջ: Յեգիպտական տահարները: Քրմերի քաղաքական ազդեցութիւնը: Անդրշխիմյան դատաստան: Մումիացում և թաղում:

Պետական կարգերը Յեգիպտոսում: Փարավոնը և նրա բրոնզադարձական իշխանութիւնը: Պետութեան կառավարումը: Պարուկները և դուրդացիները: Թաղավորական դամբարաններ, բուրգերը: Քեոպսեսի և Սֆինքսի բուրգերը: Ստրուկների և դուրդացիների աշխատանքի շահագործումը: Աշխատավոր բնակչութեան ատելութիւնը դեպի շահագործուցները:

Ստրուկների և գյուղացիների ապստամբութիւնը (մտաւաճառապետ 1750 թ. մ.թ.ա.): Հիստուները Յեգիպտոսում: Գյուղացիների և ստրուկների ծանր դրութիւնը: Լեյդենյան պապիրոս: Գյուղացիների և ստրուկների ապստամբութիւնը փարա-

վոնի, քրմերի և աստիճանավորների դեմ: Ապստամբների կազմից իշխանութիան գրավումը և հարուստների գույքի բաժանումը: Ստրկատերերի կողմից ապստամբութեան ճնշումը: Հիքսոսների արշավանքը:

Յեգիպտական նվաճումները: Հիքսոսների արտաքսումը: Նոր ավազանին և քրմերը: Գյուղացիներից և վարձկաններից կազմված նոր զորքը: Տուտմոս III-ի կողոպտչական արշավանքները, նոր յերկրների կողոպտում և ստրուկների զավթում: Փոփոխությունները պետութիան կառավարման մեջ: Առևտրի զարգացումը և ստարերկրյա ապրանքների յերևան գալը: Գյուղացիները գրութիան վատթարացումը: Ստրուկության ուժեղացումը:

Յեգիպտացիների պայքարը հեթիքների դեմ: Հեթիքների պետութիունը: Հեթիքների նվաճումները 14-րդ դարում մ.թ. ա. շ: Ռամզես II-ի պատերազմը հեթիքների դեմ Սիրիայի և Պաղեստինի համար: Ռամզես II-ի դաշնագիրը հեթիքների հետ: Լեգենդաները Ռամզես II-ի հաղթանակների մասին: «Մովսիսի ժողովուրդների» և Լիվիական ցեղերի հարձակումը Յեգիպտոսի վրա:

Յեգիպտոսի ինքնուրույնության վախճանը: Դասակարգային պայքարի սրվելը: Ստրուկների ապստամբութիունը — 1200 թ. մ.թ. ա.: Սայիսյան ժամանակաշրջանը և Յեգիպտոսի միավորումը Պսամմիտիքոս I-ի կողմից: Նեխո: Առաջին ճանապարհորդութիունը Աֆրիկայի շուրջը: Յեգիպտոսի անկումը գյուղացիների և արհեստավորների քայքայման հետևանքով: Յեգիպտոսի նվաճումը պարսիկների կողմից:

Յեգիպտական կուլտուրան: Յեգիպտական գիրը: Պապիրոս: Յեգիպտական հիերոգլիֆները և նրանց վերծանումը Ծամպոլիոնի կողմից: Յեգիպտական գրականութիունը: Յեգիպտական գիտութիունը. աստղաբաշխութիունը, որացույցը, բժշկութիունը: Յեգիպտական արվեստը: Յեգիպտական կուլտուրայի դասակարգային բնույթը և նշանակութիունը:

2. ՀՆԱԳՈՒՅՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԱԳԵՏՔՈՒՄ — 7 ՅԱՄ

Հարավային Միջագետքի բնությունը և ջրաբաշխական կառուցումները: Միջագետքի աշխարհագրական դիրքը և բնությունը:

Յեգիպտոս և Տիգրիս գետերը և նրանց նշանակութիունը Միջագետքի վտոռգման համար: Հարավային Միջագետքի ջրաբաշխական կառուցումները և գյուղացիների ու ստրուկների աշխատանքի ոգտագործումը նրանց կառուցման համար: Շումերական քաղաքներ — պետութիւնները: Միջագետքի միավորումը Սարգոն I-ի կողմից և վտոռգման սխառեմի կենտրոնացումը:

Բաբելոնի քաղաքաշինությունը և Համմուրապի քաղաքի որենգները: Ստրուկների, գյուղացիների, բատրակների և քաղաքների բնակչության գրութիւնն ըստ Համմուրապի թաղափոքի որենգների: Մշտական զորքի կազմակերպումը և զինվորների գրութիւնը: Համմուրապի թաղափոքի որենգները ստրկատերերի չահերի պաշտպանութիւնի դերքում: Բաբելոնի գրավումը կասսիտների կողմից:

Ասորեստանի նվաճումները: Ասորեստանի աշխարհագրական դիրքը և բնական պայմանները: Ասորեստանի բնակչութիւնը և նրա գրավումը: Տիգրատ-Պալաստար III-ի (745—727 թ. թ. մ.թ. ա.) նվաճումները: Ասորեստանի բանակի կազմակերպումը և ասորեստանցիների ռազմական տեխնիկան: Նվաճված յերկրների ստրկացումը: Ուրարտու թագավորութիւնը:

Ասորական ռազմական տերութիւնը և նրա անկումը: Ասորական ռազմական տերութիւնի կազմավորվելը: Ազնվատոհմների և քրմերի արտոնութիւնները: Ստրուկների, գյուղացիների և արհեստավորների ծանր դրութիւնը: Հարկերի դանձումը նվաճված յերկրներից և նրանց ապստամբութիւնների դաժան ճնշումը: Աստուրբանիքալ թագավորի գրադարանը: Ասորեստանի նվաճումը խալդերի կողմից:

Նոր-Բաբելոնյան (յալդերի) քաղաքաշինությունը: Բաբելոնի քաղաքի ծաղիկումը Նարուգոպոսոսորի սրբը: Բաբելոնը վաղ պես հին Արևելքի առևտրական և կուլտուրական կենտրոն: Բաբելոնի «կախված ալդիները»: Բաբելոնի հարստութիւնն ու շքեղութիւնը աշխատավոր բնակչության աղքատութիւնի կողքին: Բաբելոնի նվաճումը պարսիկների կողմից:

Ասոր-Բաբելոնյան կուլտուրա: Բաբելոնյան սեպագիրը և նրա վերծանումը Ռաուլինսոնի կողմից: Կրոնն ու առասպելները

և Ասորա-Բարեղոնի սոցիալական կյանքի արտացոլումը նրանց մեջ: Պոեմ Իլիդամեչի մասին: Առասպել ջրհեղեղի մասին: Բարեղոնյան դիտություններ. աստղաբաշխություն սկիզբը, որացույցը կատարելագործումը, մաթեմատիկան, ճարտարագետությունը և քանդակագործությունը: Բարեղոնյան կուլտուրայի դասակարգային բնույթը և նրա նշանակությունը:

3. ՓՅՈՒՆԻԿԻԱ: ՀՐԵԱՍՏԱՆ: ՊԱՐՍԿԱՍՏԱՆ — 4 ՃԱՄ.

Փյունիկիա: Փյունիկիայի աշխարհագրական դիրքը և բնակչության զբաղմունքը: Փյունիկյան քաղաք— պետությունները և նրանց սոցիալական կարգը: Փյունիկիայի առևտուրը, ծովային ճանապարհորդությունը և վաճառականների հարստացումը: Փյունիկիայի զաղութները: Փյունիկյան այբուբենը:

Իսրայելացոց և հրեական քագավորությունը: Պաղեստինի աշխարհագրական դիրքը և բնությունը: Հրեական ցեղերի Պաղեստին դալը— մոտ 1400 թ. մ.թ.ա.: Պայքարը փղշտացիների դեմ: Հրեական թագավորության կազմավորվելը և նրա քայքայումը: Ճնշված բնակչության դրությունը: Իսրայելացոց թագավորության նվաճումը ասորեստանցիների կողմից (VIII դ. մ.թ.ա.): Հրեաստանի նվաճումը Բարեղոնի կողմից (VI դ. մ.թ.ա.):

Պարսկաստան: Պարսկաստանի աշխարհագրական դիրքը և բնությունը: Բնակչության զբաղմունքը: Պարսիկների կրոնը: Հազատերերի և անասնապահների միջև տեղի ունեցած պայքարի արտացոլումը պարսիկների կրոնի մեջ: Պարսկական պետության կազմավորումը Կյուրոսի կողմից: Պարսկական պետության կազմավորումը Դարեհ թագավորի որդի: Պարսկաստանի բաժանումը սատրապությունների, ճանապարհաչինարարությունը, փոստի զարգացումը: Առևտրի զարգացումը: Պարսկական պետության հարստությունները: Նվաճված բնակչության ստոր-կացումը:

4. ՀԻՆ ՀՆԴԿԱՍՏԱՆ — 4 ՃԱՄ.

Հին Հնդկաստանը: Հնդկաստանի աշխարհագրական դիրքը և բնությունը: Հնդկաստանի հնագույն բնակչությունը — գրո-

վիդները — և նրանց կուլտուրան: Դրավիդների ստրկացումը նվաճողների — արիոսների կողմից: Պետությունների կազմավորվելը Ինդոսի հովտում (յերկրորդ հազարամյակ մ.թ.ա.): Բնակչության զբաղմունքները Ինդոսի հովտում: Հին հնդիկների կրոնը:

Բնահմանների պետությունը: Գանդեսի հովտի նվաճումը: Բրահմանների և կշատրինների պայքարը տիրապետության համար: Մանուի որենքները և կաստային կարգերի ամրացումը նրանց մեջ: Ստրկությունը հին Հնդկաստանում:

Բուդդայականություն: Առասպելներ Բուդդայի մասին ու նրա ուսմունքը: Բուդդայի կոչը բոլոր կաստաների հավասարեցման և դասակարգային պայքարից ՚րաժարվելու մասին: Բրահմանական կարգերի անկումը: Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումները Հնդկաստանում: Չանդրագուպայի ապստամբությունը հունական տիրապետության դեմ: Մագադիսայի թագավորության ծաղկումը Աշոկի որդի: Հնդկաստանի նվաճումն ուրիշ ժողովուրդների կողմից: Հնդկաստանի կուլտուրան. սանսկրիտական լեզու, ճարտարապետություն, մաթեմատիկա:

5. ՀԻՆ ՉԻՆԱՍՏԱՆ — 4 ՃԱՄ.

Չինաստանի հնագույն պատմությունը: Չինաստանի աշխարհագրական դիրքը և բնությունը: Չրանցքներ անցկացնելը և դրա համար օտրուկների ու գյուղացիների աշխատանքի ոգտագործումը: Չինաստանի հնագույն բնակչությունը և նրա զբաղմունքները: Չինաստանի նյութական հուշարձանները յերկրի հնագույն կյանքի մասին: Չժոույի դարաշրջանը (1122—256 թ.թ. մ.թ.ա.): Թագավորի, իշխանների և բարձրաստիճանավորների խոշոր հողատիրությունը: Յինի դարաշրջանը (256—206 թ.թ. մ.թ.ա.): Յին-Շի-Սուսն-դին և նրա սեփորմները:

Չինական մեծ պարսպի կառուցումը:

Դյուդացիների և ստրուկների ծանր դրությունը:

«Կարմիր հոսիավորների» և «դեղին չալմաների» ապստամբությունը: Սանի դարաշրջանը (206 թ.մ.թ.ա.—220 թ.մ.թ.): Դյուդացիների և ստրուկների ծանր դրությունը Սանի դարաշրջանում: «Կարմիր հոնքավորների» ապստամբությունը (18—

23 Թ.Թ. մ.Թ.): «Դեղին չալմաների» ապստամբութիւնը (182 Թ.մ.Թ.): Խանի Դինաստիայի անկումը դուռնացիներէ ու ստրուկներէ ապստամբութիւններէ և ոտարեկրացիներէ ներխուժման հետեանքով:

Հին չինացիների կուլտուրան: Հին Չինաստանի կրօնը և նրա կախիվածութիւնը բնակչութեան գրադմունքներէ: Չինական հիերոգլիֆները: Չինական մեծ պարիսպը: Գիտութիւնները՝ մաթեմատիկա, աստղաբաշխութիւն, բժշկութիւն: Չինական կուլտուրայի նշանակութիւնը:

II ԲԱԺԻՆ. ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ—37 ԺԱՄ

1. ՀՆԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿԱՆՆԵՐԸ — 10 ԺԱՄ

Յերկիրը և բնակչութիւնը: Հին Հոնաստանի աշխարհագրական դիրքը: Ափերի դժադրութիւնը: Հյուսիսային, միջին և հարավային Հունաստան: Հունաստանի բնութիւնը: Հունաստանի բնակչութիւնը և նրա գրադմունքները:

Կրետե-Միքենյան կուլտուրան: Շլիմանի պեղումները Տրոյայում և Միքենայում: Եվանսի պեղումները Կրետե կղզում: Կնոսի պալատը (լաբյուրինթոս): Կրետե-Միքենյան կուլտուրան հունական կուլտուրայի հիմքն է:

Հունական կրօնը: Հունական վաղ կրօնը: Առասպելներ աշխարհի սկզբնավորութեան մասին: Ոլիմպիական աստվածները. Հեա, Հերա, Աթենաս, Աֆրոդիտա, Արտեմիս, Ապոլլոն, Գոսեյտն: Առասպել մարդկանց ծագման մասին: Առասպել Գրոմեթեսոսի մասին: Առասպել չորս դարերի մասին: Մարդկանց և կյանքի ծագման բացատրութեան մեջ գիտական գիտելիքներէ բացակայութիւնը հույների մոտ:

Առասպելներ հերոսների մասին: Առասպելներ Հերակլեսի մասին (նեմեյան առյուծի, լերնեյան հիդրայի սպանութիւնը, Հերակլեսի սյունները): Առասպելներ Անթետոսի, Թեզետոսի, Եդրպի մասին և արդոնավորողների մասին (Ալգոննավորողների արշավանքը: Արշավանքի նպատակը: Թենետոս թագավորը: Լոգացող ժայռերը: Վոսկյա դեղմն: Որֆեյ): Բնութիւնն իրեն յենթարկելու համար մարդկանց ողած յերկարատև պայքարի արտացոլումն առասպելների մեջ:

Հին հունական եպոսը: Հոմերոսը և նրա պոեմները: Տրոյական պատերազմը: Կովալինձորը: Տրոյական պատերազմի սիդրքը: Իլիականը. (Աքիլլեսի կռիվը Ագամեմնոնի դեմ: Պատրոկլեսի մահը: Աքիլլեսի հաշտվելը հույների հետ: Աքիլլեսի մենամարտութիւնը Հեկտորի հետ: Աքիլլեսի մահը: Փայսե ձին: Տրոյայի անկումը):

Վաղիսականը: Վոզիսեվսի ճանապարհորդութիւնը: Վոզիսեվսը Պոլիթեմոսի և քամիների աստված՝ Եոլոսի մոտ: Ծովահարները: Սցիլլան և Խարիբդան: Վոզիսեվսի մնալը թեակներէ մոտ: Վոզիսեվսի վերադարձը հայրենիք: Փեսացուների սպանութիւնը: Հին հույների ուղիղական և խաղաղ կյանքի արտացոլումն Հոմերոսի պոեմներում:

Գասակարգերի և պետութեան ծագումը հին Հունաստանում: Բնակչութեան գրադմունքները և տոհմական կարգերը Հոմերոսե դարաշրջանում: Մանալոր սեփականութեան և դասակարգերի յերևան դալը: Բասիլևսների հարստութիւնները: Պայքարը ժողովրդի և ասպանու միջև: Քաղաք — պետութիւնների (պոլիսների) ծագումը: Պոլիսի քաղաքական կառուցվածքը, վորպես ժողովրդական մասսաներին ճնշելու գործիք:

Հունական առևտուրը և գաղութացումը: Գաղութացման պատճառները: Հունական գաղութները (Խերսոնես, Պանտիկոպեյ, Եֆես, Միլետ, Տարնտ): Գաղութների բնակիչներէ գրադմունքները: Ստրկավաճառութեան դարձացումը: Փողի և դրամի յերևան դալը Հունաստանում:

Հունական վաղ կուլտուրան: Զինվորական կենցաղը. Արիստոկրատները և շարքային զինվորների սպառազինումը: Ոլիմպիական խաղերը և նրանց նշանակութիւնը: Ժամանակի հաշվումն ըստ ոլիմպիականների: Դրակուլները (պատգամախոսները) և նրանց նշանակութիւնը քրոնիկայի տնտեսական և քաղաքական ազդեցութեան համար:

2. ՍՊԱՐՏԱ.— 2 ԺԱՄ.

Սպարտայի հասարակական կարգերը: Սպարտայի աշխարհագրական դիրքը և բնութիւնը: Սպարտայի բնակչութիւնը. սպարտացիներ, պերիեկներ և հելոտներ: Հողը և հելոտները

պետական սեփականութիւն: Առաջել Լիկուրզոսի մասին: Սպարտայի քաղաքական կարգերը վորպես հելոտներին և պերի-
եկներին ճնշելու գործիք:

Սպարտացիաների կենցաղն ու դաստիարակութիւնը: Սպարտացիներին տերապետութիւնը և նրանց զինվորական կառու-
մակերպութիւնը: Հասարակական ճաշկերույթները: Հելոտներ-
ի կոտորածը սպարտացիներին կողմից: Սպարտական դաստիար-
ակութիւնը և նրա ռազմական բնույթը: Սպարտական գործի
կազմակերպումը: Մեսենիայի նվաճումը: Պելոպոնեսոսյան միութ-
իւնը վորպես արիստոկրատիայի պատվար դեմոսի դեմ:

3. ԱԹԵՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ — 5 ԺԱՄ

Յեվպատրիզների տիրապետութիւնն Աթենքում: Հին Աթա-
կայի աշխարհագրական գիրքը և բնութիւնը: Աթենք քաղաքը: Տոհմային
կարգերի քայքայումը Աթենքում: Աթենքի հնագույն
պետական կառուցվածքը (արիստոներ, արեոպագոս, ժողովրդ-
դական համաժողով): Յեվպատրիզների տիրապետութիւնը դե-
մոսի վրա: Պարտային ստրկութիւնը և դյուղացիներին ծառա-
յադրելը: Դրակոնի որենքները: Յեվպատրիզների կամայական
նութիւնն արինականացումն այդ որենքներով:

Սոլոնի որենքները: Պարտային ծառայագրման վոչնչացումը:
Դուրքային ցենդի սահմանումը: Բնակչութիւնն բաժանումը 4
դասակարգի: Քաղաքացիների իրավունքներն ու պարտականու-
թիւնները: 400-ի խորհուրդը. Դեդուհութիւնը Սոլոնի ռեֆոր-
մից՝ նրա կիսակատարութիւնն հետևանքով:

Բռնապետութիւնն Աթենքում: Իշխանութիւնն գրավումը
Պիսիստրատեսի կողմից: Բռնապետութիւնը: Պիսիստրատեսի
գործունեութիւնը հոգուտ ունեւոր դյուղացիների շահերի և
ի վնաս տոհմային ավագանու շահերի: Հիպիասի և Հիպարչոսի
կառավարումը: Բռնակալութիւնն ճնշումը Աթենքում:

Ստրկատիրական դեմոկրատիայի հաստատումն Աթենքում:
Քայքայը դեմոսի և արիստոկրատիայի միջև: Դեմոկրատական
կուսակցութիւնն իշխանութիւնն գլուխ անցնելը՝ Կլիսթենեսի
գլխավորութիւնը: Կլիսթենեսի ռեֆորմները: Տոհմային կար-
գերի մնացորդների վոչնչացումը: Ոստրակիցի: Աթենքի ստրկա-
տիրական դեմոկրատիայի սկիզբը:

4. ՀՈՒՆԱ-ՊԱՐՍԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ՅԵՎ ԱԹԵՆՔԻ ԾԱՂԿՈՒՄԸ — 6 ԺԱՄ

Պատերազմի սկիզբը: Հունա-պարսկական պատերազմների
պատճառները: Փ. Ասիայի հույների ապստամբութիւնը: Մալ-
դոնիայի արշավանքը: Մարաթոնյան ճակատամարտը և հույ-
ների հաղթութիւնն պատճառները:

Թեմիստոկլեսը և Արիստիդեսը՝ վորպես դեմոկրատական և
արիստոկրատական կուսակցութիւնների ներկայացուցիչներ:
Նավատորմի ստեղծումը:


Քսերքսեսի արշավանքը: Կռիվը Թերմոպիլեսոսյան լեռնանց-
քի մոտ: Ճակատամարտը Մալամին կղզու մոտ: Ճակատամարտ-
ները Պլատեյի և Միկալայի մոտ: Պարիկների արտաքսումը և
փոքր-ասիական դադութիւնների աղտաաղբումը: Հույների հալ-
թութիւնների պատճառները:

Աթենական ծովային պետութիւնը: Պարսիկների դեմ մղ-
վող պատերազմի ընթացքում Աթենքի բարձրանալը: Աթենական
ծովային միութիւնն կազմակերպումը: Աթենական միութիւնն
վերածումը ծովային պետութիւն: Աթենքի գերիշխանութիւնը
ցամաքի և ծովի վրա:

Ստրկութիւնը հին Հունաստանում: Պատերազմը վորպես
ստրկութիւնն գլխավոր աղբյուր Հունաստանում: Ստրուկների
շուկաները և ստրկավաճառութիւնը: Ստրուկների աշխատանքը
նրկատերիաներում, գյուղատնտեսութիւնն և լեռնադործութիւնն
մեջ: Պետական ստրուկները: Մտրուկների քանակը: Ստրուկի
արժեքը: Ստրուկների աշխատանքի շահագործումը ստրկատեր-
ւի կողմից: Ստրուկը—խոսող գործիք: Աղատ արհեստավորների
և դյուղացիների քայքայումը:

Ստրկատիրական դեմոկրատիայի ծաղկումը: Արեոպագոսի
քաղաքական նշանակութիւնն վոչնչացումը: Պերիկլեսի կառարած
ռեֆորմները Դեմոսի շահերի ոգտին: Վիճակահանութիւնն մի-
չոցով պետական պաշտոններ տեղակալելը: Պետական պաշտոն-
ների համար վճար սահմանելը: Աթենական ստրկատիրական դե-
մոկրատիայի տերապետութիւնը: Աթենական կուլտուրայի ծաղ-
կումը:

1486
40



5. ՊԵՆՏԱՊՈՆՆԵՍՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՅԵՎ ԱԹԵՆԻԻ ԱՆԿՈՒՄԸ
— 4 ժԱՄ.

Պատերազմի առաջին ետապը: Պելոպոնեսյան պատերազմի պատճառները: Պատերազմի առիթը: Պատերազմի սկիզբը: Պատերազմի և խաղաղության կուսակցությունը: Դասակարգային պայքարի սրվելը արիստոկրատիայի և դեմոկրատիայի միջև: Նիկիական հաշտությունը:

Միցիլիական արշավանքը և Աթենքի պարտությունը: Նիկիական հաշտության անկայունությունը: Ալիքվիադեսի յելույթը պատերազմը շարունակելու համար: Միցիլիական արշավախումբը: Ալիքվիադեսի դավաճանությունը և Աթենքի պարտությունը: Աթենքի դրություն վատթարացումը:

Պատերազմի վերջը և 30-ի բռնապետությունը: Աթենքի պարտությունը սպարտացիների և պարսիկների միացյալ ուժերի հանդեպ: Ոլիգարխիական հեղաշրջումը: Ոլիգարխիների դաժան դատաստանը դեմոկրատների հետ: Բռնապետության տապալումը դեմոկրատիայի կողմից: Պելոպոնեսյան պատերազմի վերջը և նրա հետևանքները:

Ստրուկների և չքավորների ապստամբությունները: Արիստոկրատների և դեմոսի միջև պայքարի սրվելը: Ստրուկների և չքավորների դաշինքը արիստոկրատների դեմ մղված պայքարում: Ստրուկների ապստամբությունն Արգոսում: Հելոտների ապստամբությունը Սպարտայում: Հունական հասարակության հիմնական հակասությունը — պայքար ստրուկների և ստրկատերերի միջև և չքավորների ու հարուստների միջև:

6. ՀՈՒՆԱՍՏԱՆԸ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ — 5 ժԱՄ.

Թատրոնը: Թատրոնի ծագումը: Վոդերգությունը: Կատակերգությունը: Թատրոնի կառուցումը: Հունական թատրոնի ծագումը Պերիկլեսի որոշը:

Հունական դրամատուրգիան: Եսքիլես («Շղթայված Պրոմեթևոսը»), Սոփոկլես («Եղիպարքան»), Եվրիպիդես («Մեդեա»): Հունական կատակերգությունը: Արիստոֆան (Գորտերը): Հունական թատրոնի նշանակությունը կուլտուրայի զարգացման մեջ:

Հունական արվեստը: Հունական ճարտարապետությունը և

նրա վոճերը (դորիական, կորնթյան և հոնիական): Հունական քանդակագործությունը: Ճիզիասի քանդակագործական աշխատանքները: Վաղային կենդանագրությունը: Հունական արվեստի նշանակությունը:

Հունական գիտությունը: Հունական պատմագիրները. Հերոդոտ, Ցուկիդիդես, Բսենեֆոնա: Հունական փիլիսոփաները. Սոկրատես, Պլատոն, Արիստոտել: Հունական փիլիսոփայության ստրկատիրական բնույթը: Հունական գիտության նշանակությունը:

7. ՀՈՒՆԱՍՏԱՆԸ ՄԱԿԵՊՈՆԻԱՅԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈՒՄ
— 5 ժԱՄ.

Հունաստանի դրությունը Պելոպոնեսյան պատերազմից հետո: Սպարտայի հեգեմոնիան ամբողջ Հունաստանի վրա: Անտաղիկյան խայտառակ հաշտությունը: Սպարտայի հեգեմոնիայի տապալումը թերեյական դեմոկրատիայի կողմից: Աթենական յերկրորդ միությունը: Եպամինոնդը և նրա արշավանքը Սպարտայի վրա: Աթենական յերկրորդ միության քայքայումը:

Մակեդոնիայի բարձրանալը: Մակեդոնիայի աշխարհագրական դիրքը, բնությունը և բնակչությունը: Փիլիպոսի ռազմական ռեֆորմները: Քերոնեյայի ճակատամարտը: Կորնթյան համագումարը և նրա վերջումները: Յերկու կուսակցությունների պայքարն Աթենքում: Դեմոսթենես և Եսքիլես:

Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումները: Ալեքսանդրի դատարակությունը: Ալեքսանդրը — Մակեդոնիայի թագավոր: Ալեքսանդրի արշավանքը դեպի Արևելք՝ նոր յերկրներ նվաճելու համար: Ճակատամարտը Իսոսի մոտ: Յեդիպոսի նվաճումը: Ճակատամարտը դավդամեյայի մոտ: Արշավանքը դեպի Միջին Ասիա և Հնդկաստան: Ալեքսանդր Մակեդոնացու բնագործակալական քաղաքական կազմավորումն Արևելքում:

Հելլենական պետությունները և նրանց կուլտուրան: Դիոգենեսի պայքարը: Հելլենականությունը: Ալեքսանդրիան վերաբերա հելլենական կուլտուրայի կենտրոն: Նրա թանգարանը և դրազարանը: Մաթեմատիկայի և ռազմական տեխնիկայի զարգացումը (Եվկլիդես, Արքիմեդ): Աստղաբաշխության զարգացումը

հումը (Պատգոմեսոր) : Հեղինական կուլտուրայի բնույթը : Հեղինական կուլտուրայի նշանակութունը :

Հունաստանի անկումը : Հունաստանը Մակեդոնիայի իշխանության ներքո : Աքեյական և Եսոլինյան միությունները : Դասակարգային պայքարը Սպարտայում : Ագիսեսի և Կլիոմենեսի ռեֆորմները : Սարուկների աստամբուլությունը Դրիմակի գեղավարությունը : Սորկուլիան դարգացման հետևանքով Հունաստանի անկումը : Հունաստանի նվաճումը Հռոմի կողմից :

Տարվա ընթացքում դասընթացի կրկնության համար 10 ժամ

Մ Ր Ա Գ Ի Ր

VI ԴՈՍԱՐԱՆ

(1-ին կիսամյակ)

III ԲԱԺԻՆ. ՀՌՈՍ—39 ԺԱՄ

Կրկնություն—3 ժամ

Հին Հռոմ— 36 ժամ

1. ՀՌՈՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԱՂ ՇՐՋԱՆԸ— 7 ԺԱՄ

Հին Իտալիայի բնությունը և բնակչությունը : Իտալիայի աշխարհագրական դիրքը և բնությունը : Իտալիայի բնակչությունը (դալլեր, էտրուսկներ, իտալիկներ, հույներ) : Ետրուսկների կուլտուրան : Հռոմի ծագումը : Առասպել Հռոմի ծագման մասին և նրա նշանակությունը :

Տոնմային կարգերը Հռոմում : Պատրիկները և պլեբեյները : Պլեբեյների իրավազուրկ դրությունը, սակավահողությունը և պարտաբեռնվածությունը : Հռոմեյական համայնքի քաղաքական կարգը—թագավոր, սենատ, կուրիատները ժողովներ : Սերվիոս Տուլլիոսի ռեֆորմը, պլեբեյների քաղաքական իրավունքների ընդլայնումը :

Պատրիկների և պլեբեյների պայքարը : Թագավորական իշխանություն անկումը և հանրապետության հաստատումը : Հանրապետության կառուցվածքը. կոնսուլներ, սենատ, ժողովրդական համաժողով, դիկտատորներ : Պատրիկների իշխանություն ամրացումը : Պլեբեյների պայքարը հողի և քաղաքական իրա-

վունքների համար : Ժողովրդական տրիբուններ : XII աղյուսակների որենքները : Պլեբեյների պայքարը կոնսուլական իշխանության համար : Լիցիոնիայի և Սեկստիայի որենքները : Պլեբեյների հաղթությունը : Նորիլիտեի կազմակերպումը : Հռոմեյական հանրապետության արիստոկրատական բնույթը :

Խոնախայի նվաճումը : Նվաճման նպատակները : Դալլերի առաջնությունը : Լապինական պատերազմը : Սամնիտական պատերազմները : Պատերազմները Պյուրոսի դեմ և հարավային Իտալիայի նվաճումը : Նվաճված ժողովուրդների հողերի զավթումը պատրիկներին և հարուստ պլեբեյներին կողմից :

Հռոմեյական զինվորական կազմակերպությունը : Հռոմեյական զորքը : Ամրացված ճամբարը : Ռազմական մեխանիզմները : Դաշնակիցները, նրանց իրավունքներն ու պարտականությունները : «Բաժանիր և իշխիր» — քաղաքականությունը :

Հռոմեյացիների հնագույն կրոնը : Բաղմաստվածություն : Կրոնական ծեսերը և դուշակությունները : Քրմերը և վեստալուհիները : Քրմերի քաղաքական դերը : Հունական կրոնի ազդեցությունը Հռոմեյականի վրա : Հռոմեյական կրոնն ի սպասատրիատներին :

2. ՀՌՈՍԵՅԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎԻ ԱՎԱՋԱՆՈՒՄ — 4 ԺԱՄ :

Փունիկյան առաջին պատերազմը : Կարթագենը և նրա ուլիգարիական պետական կառուցվածքը : Պատերազմի պատճառները : Սիցիլիայի զավթումը Հռոմեյացիների կողմից և նավատորմի կառուցումը : Հռոմեյացիների պարտությունը Աֆրիկայում : Պատերազմի վերջը և հաշտության պայմանները : Կարթագենի և Հռոմեյացիների նվաճումները փունիկյան առաջին պատերազմից հետո :

Փունիկյան յերկրորդ պատերազմը : Պատերազմի հայտարարում : Հաննիբալի արշավանքն Իտալիայի վրա : Ճակատամարտը Տրադիմենյան լճի մոտ : Ճակատամարտը Կաննների մոտ : Սիրաչուզայի և Կապուայի նվաճումը Հռոմեյացիների կողմից : Արքիմեդի սպանությունը : Պատերազմի վերջը և հաշտության պայմանները : Հռոմի հաղթությունների պատճառները :

Մակեդոնիայի և Հունաստանի նվաճումը : Փունիկյան յեր-

բարդ պատերազմը: Մակեդոնիայի նվաճումը Հոմերի կողմից: Կորնթոսի ջախջախումը և Հունաստանի նվաճումը 146 թ.: Փունիկյան յերրորդ պատերազմը: Կարթագենի գրոհումն աւազերումը: III և II դարերի հռոմեական նվաճումների թալանչիական բնույթը: Հռոմեական գյուղացիների և արհեստավորների քայքայումը փունիկյան պատերազմների հետևանքով: Ստրկության զարգացումը:

3. ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՀՌՈՄԸ ԻՄ ՅԵՎ Ի ԳԱՐԵՐՈՒՄ Մ. Թ. Ա.
— 3 ժԱՄ.

Ստրկական աշխատանքի զարգացումը և ստրուկների դրուքումը: Պատերազմը վորպես ստրկության գլխավոր աղբյուր: Ստրուկների շուկաները: Պետական ստրուկներ: Քաղաքային և գյուղական ստրուկներ: Ստրուկ-գլազխատորներ: Ստրուկների ծանր դրությունը: Ստրուկը — խոսող գործիք: Ազատ արձակված ստրուկներ:

Հռոմեական կապալառուների և վաշխառուների հարքստանուլը: Պրովինցիաների կողողտումը: Հեծյալներ: Սպեկուլյացիայի և վաշխառության զարգացումը: Առևտրի զարգացումը: Սոչոք հողատիրութայն կազմավորումը: Գյուղացիութայն քայքայումը: Լյումպեն-պրոլետարիատի դոյացումը:

Հռոմի կենցաղն ու կուլտուրան III և II դ. դ. մ. թ. ա.: Երեւոյության զարգացումը նորիլների և հեծյալների շրջանում: Հունական կուլտուրայի ազդեցությունը: Հռոմեական դրահանութայն ծագումը: Պրավտայի կրտակերպությունները:

4. ՍՏՐՈՒԿՆԵՐԻ ՅԵՎ ԱԶԱՏ ԶԲԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ՀՌՈՄԵՅԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ
— 11 ժԱՄ.

Ստրուկների առաջին ապստամբությունը Սիցիլիայում (137—131 թ. թ. մ. թ. ա.) և ապստամբությունը Պերգամում: Ստրուկների ծանր դրությունը Սիցիլիայում: Ստրուկների ապստամբության սկիզբը: Ստրուկների հաղթությունը և նրանք կողմից իրենց իշխանութայն կազմակերպումը: Ապստամբության դաժան ճնշումը հռոմեական դորքերի կողմից: Արիստոնիկի գեղավարությամբ ստրուկների և ազատ չքավորության ապստամ-

բությունը Պերգամի թաղավորության մեջ: Ապստամբության դաժան ճնշումը հռոմեացիների կողմից:

Գրակիսոսների ռեֆորմները: Հռոմեական ազատ գյուղացիների քայքայումը և նրանց հուղումները: Գրակիսոս յեղաշարները: Տիրերիոս Գրակիսոսը: Տիրերիոս Գրակիսոսի հողային որենքը: Նորիլների պայքարը հողային որենքի դեմ: Որենքի հաստատումը ժողովրդական համաժողովի կողմից: Տիրերիոս Գրակիսոսի սպանությունը նորիլների կողմից:

Գայոս Գրակիսոսի ռեֆորմները: Գայոս Գրակիսոսի որենքները: Գայոս Գրակիսոսի սոցիալական պատվարը: Նորիլների պայքարը Գայոսի որենքների դեմ: Գայոս Գրակիսոսի և նրա կողմնակիցների ապստամբությունը: Գրակիսոսների ռեֆորմների անհաջողության պատճառները:

Մարիուսի ռազմական ռեֆորմը: Առաջին ընդհարումը բարբարոսների հետ: Յուդուրդիսյան պատերազմը: Մարիուսի ռազմական ռեֆորմը, հռոմեական բանակի վերածումը վարձկան բանակի: Կլավդիոսների և տեվտոնների ներխուժումը և նրանց պարտությունը:

Ստրուկների յերկրորդ ապստամբությունը Սիցիլիայում: Ապստամբության սկիզբը: Ապստամբների ջանակի կազմակերպումը: Ապստամբության կենտրոնները: Ապստամբության դեկավարները: Ապստամբության ծավալումը: Ապստամբության դաժան ճնշումը հռոմեացիների կողմից: Ստրուկների ապստամբությունն Աթենքում և Բոսսորում:

Իտալիկների ապստամբությունը: Սուլլայի դիկտատուրան: Իտալիկների իրավազուրկ դրությունը: Ապստամբության սկիզբը և ընթացքը: Ապստամբության ճնշումը: Ապստամբությունները հռոմեացիների դեմ Փոքր-Ասիայում և Հունաստանում: Քաղաքացիական պատերազմն Իտալիայում և պայքարը Մարիուսի ու Սուլլայի միջև: Պրոսկրիպիաները: Սուլլայի դիկտատուրան:

Հռոմի դեմ ուղղված պայքարը Իսպանիայում Վիրիատը և Սերտորիյեն: Իսպանիայի բնակչությունը (կելտիբերներ, իբերներ և լուզիտացիներ): Փունիկյան պատերազմներից հետո Իսպանիայի վերածվելը հռոմեական պրովինցիայի: Լուզիտացիների ապստամբությունը Վիրիատի գլխավորությամբ: Իսպանական ցեղերի ապստամբությունը Սերտորեյի գլխավորությամբ: Ապստամբության ճնշումը:

Սպարտակի ապստամբութիւնը: Գլաղբիատորները զավա-
զբութիւնը կապուած: Ապստամբները սոցիալական կազմը
Սպարտակի արշավանքները: Սպարտակի հերոսական պայքարը
ստրկատերերի դեմ: Տարածայնութիւններն ապստամբների
միջև: Ապստամբութեան վերջը: Ապստամբված ստրուկների պար-
տութեան պատճառները: Ապստամբութեան նշանակութիւնը:
Լենինը Սպարտակի մասին:

Կատիլինայի դավադրութիւնը: Կատիլինայի զավազբու-
թիւնը հանրապետութեան դեմ: Կիկերոնի ճառերը Կատիլինայի
դեմ: Կատիլինայի ապստամբութեան ճնշումը: Մովսէսների
Չախչախումը և Միհրդատ Պոնտացու ապստամբութեան ճնշումը
Պոմպեոսի կողմից:

Առաջին յեռապետութիւնը: Հուլիոս Կեսարը: Կեսարի ճրգ-
տումը՝ հաստատելու գինւորական դիկտատուրա: Առաջին յե-
ռապետութեան կազմակերպումը: Կեսարի նվաճողական պատե-
րագիրը Գալլիայում: Յեռապետութեան քայքայումը: Կեսարի
պայքարը Պոմպեոսի դեմ՝ Իշխանութեան համար:

Կեսարի դիկտատուրան հոգուտ ստրկատերերի:

Հանրապետութեան անկումը: Կեսարի սպանութիւնը հան-
րապետականների կողմից: Յերկրորդ յեռապետութիւնը: Հան-
րապետականների Չախչախումը գինւորական դիկտատուրայի
կողմնակիցների կողմից: Ոկտավիանոսի պայքարն Անտոնիոսի
դեմ: Հանրապետութեան անկումը: Հանրապետութեան անկման
պատճառները:

5. ՀՈՈՄԵՅԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ I ՅԵՎ II Դ. Դ. Մ.Թ.
(ՊՐԻՆՅԻՊԱՏ) — 6 ԺԱՄ.

Ոկտավիանոս Ոգոստոսի կառավարումը (30 թ. մ.թ.ա. —
14 թ. մ.թ.): Ոգոստոսի պրինցիպատը վորպես ստրկատերերի
դիկտատուրա հանրապետութեան անվան տակ: Պրետորիանական
գվարդիան: Զվարճութիւնները և բաշխումները — ժողովրդին
կաշառելու համար: Ոգոստոսի արտաքին քաղաքականութիւ-
նը:

Հռոմի կենցաղն ու կուլտուրան հանրապետութեան վերջում
և I դարում (մ.թ.): Հարստութեան աճումը և շքեղութեան զար-
դացումը: Լյուդպեն-պրուլետարիատի աճումը: Մեկենասի խրմ-
բակը: Գրականութեան զարգացումը: Ենեիզա Վիրգիլիոսը:

Ռիդգիոսի «Մետամորֆոզները», Հորացիոսի ներբողները, Տի-
տոս Լիվիոս պատմաբանը: Հռոմեական գիտնական Պլինիոս
Ավագը: Հռոմեական կուլտուրայի ստրկատիրական բնույթը և
նրա նշանակութիւնը:

Հռոմեական կայսրութիւնը I-ին դարում (մ.թ.): Ստրկա-
տերերի գինւորական դիկտատուրայի ուժեղացումը Տրեբերիոսի
որոք: Հասարակական դժգոհութիւնների աճումը Ներոնի որոք:
Հռոմի հրկիզումը: Ներոնի դաժանութիւնը և նրա կործանումը:

Ապստամբութիւնները պրովինցիալներում: Վեսպասիանոսի
միջնացումները կայսրութեան ամրապնդման դժուր: Ապս-
տամբութիւնը Հրեաստանում հռոմեական տիրապետութեան
դեմ: Ապստամբութեան դաժան ճնշումը հռոմեացիներին
կողմից: Տրոյանոս կայսրը և նրա ներքին ու արտաքին
քաղաքականութիւնը: Բյուրոկրատական սխտեմի զարգացու-
մը: Հրեաների յերկրորդ ապստամբութիւնը և Հրեաստանի
ավերումը հռոմեացիների կողմից:

Պայքարը բարբարոսների դեմ: Կայսրութեան ներքին և
արտաքին ծանր դրութիւնը II և III դարերի (մ.թ.) սահմանա-
դժուր: Բարբարոսների ներխուժումը հռոմեական կայսրութեան
սահմանները: Մարկոս Ավրելիոս կայսրի պայքարը բարբարոս-
ների դեմ Դանուբյան սահմանում: Սեպտիմիոս Սեւերիոս սաղ-
մաբյուրոկրատական միապետութիւնը: Գարակալիոս կայսրի
որենքը կայսրութեան բոլոր ազատ բնակիչներին հռոմեական
քաղաքացիութեան իրավունքներ տալու մասին:

6. ՄՏՐՈՒԿՆԵՐԻ ՀԵՂԱՓՈՆՈՒԹՈՒՆԸ, ԲԱՐԲԱՐՈՍՆԵՐԻ ՆՎԱ-
ՀՈՒՄՆԵՐԸ ՅԵՎ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ — 5 ԺԱՄ

Հեղափոխութեան հարձակումը: Կոլոնատի զարգացումը:
Գյուղացիութեան աղետալի վիճակը: Առևտրի ու արհեստի կըր-
ճատումը: Փողային ճգնաժամ: Ստրուկների ապստամբութիւնը
Սիցիլիայում և արհեստավորների ապստամբութիւնը Հռոմում:
Բարբարոսների՝ գերմանացիների, գալլերի, պարսիկների, սլա-
ւոնների ներխուժումը: Բազաուզների ապստամբութիւնը Գալ-
լիայում:

Դիոկղետիանոսի ռեֆորմները: Դոմինատի — ստրկատերերի
քայքայող դիկտատուրայի հաստատումը: Կայսրութեան բա-

ժանուժը չորս մասերի հեղանիսական շաժման դեմ պայքարելու նպատակով: Հարկերի ավելացումը և բնակչութիան ճորտացումը: Բյուրոկրատական սխտեմի հաստատում:

Քրիստոնեյությունը: Քրիստոնեյութիան ծագումը: Հիսուս: մասին առասպելը և էրա կապը մեռնող ու կրկին կենդանացող աստծու մասին արեւելյան առասպելների հետ: Վաղ քրիստոնեյությունը: Քրիստոնեյական համայնքների կազմակերպումը: Յեկեղեցու հարմարվելը ստրկատերերի շահերին III դարում: Քրիստոնեյութիան ընդունումը հռոմեական կայսրերի կողմից (Դիոկղետիանոսի հաջորդները):

Կոստանդին կայսրը և նրա հաջորդները: Կոստանդինի հաղթանակը դահի համար մղված պայքարում: Կոստանդինի դաշինքը քրիստոնեյական յեկեղեցու հետ: Հերետիկոսությունների առաջացումը, վորպես բողոք յեկեղեցու կողմից ստրկատերերի շահերի պաշտպանութիան դեմ: Ալեքսանդրիների շարժումը: Միլանի հրովարտակը:

Բարբարոսական նվաճումները: Հռոմեյական կայսրութեան անկումը: Հոները և վեսագոթերի ներխուժումը: Վեսագոթերի ապստամբութեւնը և Հռոմի գրավումն Ալարիկի կողմից: Աթիլան և Կատալաունյան ճակատամարտը: Վանդալների ներխուժումը: Ռոմուլոս Ավգուստուլայի դահնկեցութեւնը: Հռոմի կործանման պատճառները: Ստալինը ստրուկների տամբութեան մասին:

Կրկնություն — 3 ժամ:

ՍԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ Բ Ա Յ Ա Տ Ր Ա Գ Ի Ր

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ VI — VII ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Միջին դարերի պատմութեան դասընթացը, վորի ծրագիրը արված է ստորեւ, նպատակ է դնում ժամանակագրական հետեւողականութեամբ տալ ֆեոդալական ֆորմացիայի ծագման, զարգացման և քայքայման պատմական պրոցեսի: կոնկրետ պատկերը յեվրոպական և (համառոտ) ասիական վարիանտներով: Մրան համապատասխան կառուցվում է միջին դարերի պերիոդիզացիան, նրա բաժանումն յերեք հիմնական ժամանակաշրջանի:

Յեվրոպական ֆեոդալիզմի ծագման և ձևափոխման առաջին շրջանը, վորպես տրոհվող անտիկ ստրկատիրական հասարակութեան և տրոհվող բարբարոսական՝ կելտերի, դերմանացիների և սլավոնների, նախնադարյան — համայնական կարգերի սինթեզը, իր հերթին բաժանվում է յերեք ժամանակաշրջանի. 1) անտիկ հասարակութեան քայքայումը՝ Հռոմեյական կայսրութեան անկումը. 2) բարբարոսների նախնադարյան — համայնական կարգերի քայքայումը և Հռոմեյական նախկին կայսրութեան տերիտորիայի վրա այսպես կոչված բարբարոսական պետութեւնների առաջացումը. 3) բարբարոսական հասարակութեւնների և պետութեւնների ֆեոդալիզացիայի պրոցեսը, վորն առանձնապես մանրամասն ցույց է արված մերովինդների և կարոլինգների ֆրանկական պետութեան որինակով և ընդհանուր դժբեռով տրված է ասիական կարեւորագույն հասարակութեւնների որինակով: Այս բաժնում առանձնաբար զատվել է Բյուզանդիային՝ բարբարոսական արշավանքներից ազատված անտիկ հասարակութեան այդ բեկորին նվիրված թեման, Բյուզանդիա, վորն այժմ

հետև յերկար ժամանակներէ ընթացքում աչրել և Ֆեոդալական վերասերման պրոցեսը:

Ֆեոդալիզացիայի պրոցեսի սոցիալ-տնտեսական հիմքը հանդիսանում եր ստրուկներէ և կոլոններէ հեղափոխութեան հետ կապված անցումն անտիկ ստրկատիրական Փորձացիայից դեպի Ֆեոդալական, ճորատիրական Փորձացիան, նրա տնտեսական բազայով — անմիջական արտադրողի՝ ճորտի մանր, տնտեսապէս ինքնուրույն տնտեսութեամբ: Սրանում և կայանում, այդ անցման ամբողջական պրոզրեսիվ նշանակութիւնը:

«Ստրկատիրական կարգերում արտադրական հարաբերութիւններէ հիմք հանդիսանում և ստրկատիրոջ սեփականութիւնն արտադրութեան միջոցների, ինչպէս նաև արտադրութեան աշխատողի՝ ստրուկի նկատմամբ, վորին ստրկատերը կարող և վաճառել, դնել, սպանել, ինչպէս անասունի»: (Համամիութենական կոմունիստական (բոլշևիկներ) կուսակցութեան պատմութեան դասընթաց, էջ 167.):

«Ֆեոդալական կարգերում արտադրական հարաբերութիւններէ հիմք հանդիսանում և Ֆեոդալի սեփականութիւնն արտադրութեան միջոցների նկատմամբ և վորչ-լրիվ սեփականութիւնն արտադրութեան աշխատողի՝ ճորտի նկատմամբ. — վորին Ֆեոդալն արդեն չի կարող սպանել, բայց վորին նա կարող և վաճառել, դնել: Ֆեոդալական սեփականութեան կողքին արդեն դոյութիւն ունի դյուզացու և արհեստավորի միանձնյա սեփականութիւնն արտադրութեան դործիքների և իր մտնավոր տնտեսութեան նկատմամբ, սեփականութիւն, վորը հիմնված և անձնական աշխատանքի վրա»: (Համամիութենական կոմունիստական (բոլշևիկներ) կուսակցութեան պատմութեան համառատ դասընթաց, էջ 168):

Ճորտի, վորպէս ինքնուրույն տնտեսատերի, շահադրողութեան աշխատանքով և նախաձեռնութիւնը նպաստում և արտադրողական ուժերի զարգացմանը Ֆեոդալական հասարակութիւնում, և այդ զարգացման կարևորագույն ետապ են դառնում արհեստների անջատումը դյուզական տնտեսութիւնից, առևտրի զարգացումը և առևտրի ու արհեստների տերիտորիալ միացումը միևնույն վայրում, վորն այնուհետև դառնում և քաղաք: Այսպիսին են Ֆեոդալական Փորձացիայի պատմութեան յերկրորդ ժամանակաշրջանի տնտեսական բազայի բնորոշ դժե-

քը, ժամանակաշրջանի, վորը սկսվում և յեվրոպական քաղաքի զարգացման հետ միասին:

Արհեստի և միջնադարյան արդյունաբերութեան զարգացումն առայժմ դեռ մանր Ֆեոդալական արտադրութեան յեղանակի բազայի վրա նրա հիմք — դյուզացու ու արհեստավորի մանր ինքնուրույն տնտեսութեամբ — իր հետևանքներով այնուամենայնիվ չափազանց կարևոր փոփոխութիւններ և մտցնում Ֆեոդալական հասարակութեան սոցիալական և քաղաքական կարգերում: Աստիճանաբար զարգանում և տնտեսական կապը քաղաքի և դյուզի միջև, տարբեր տերիտորիաների միջև և ստեղծվում է, ճիշտ է, դանդաղ, բայց անընդհատ, ավելի կամ պակաս խոշոր տերիտորիաների տնտեսական միասնութիւն — այն, ինչ վոր մենք անվանում ենք ներքին շուկա, աճում է քաղաքների և քաղաքացիների նշանակութիւնը, վորոնք շահադրողված են ներքին շուկայի ամբացման և հետագա զարգացման մեջ, իսկ դրա հետևանքով նաև մեծ տերիտորիաների քաղաքական միացման մեջ: Խոշոր տերիտորիաների տնտեսական միասնականութեան աճման և պետութիւնների ուժեղացման պրոցեսի հետ միասնամանակ, սրվում են դասակարգային հակասութիւնները և ուժեղանում է դասակարգային պայքարը: Այսպէս, քաղաքական մասնատված դրութիւնից, վորը հատուկ է վաղ Ֆեոդալիզմին, ծագում է Ֆեոդալական պետութեան առաջին ձևը՝ դասային միապետութիւնը, ժամանակակից յեվրոպական պետութիւնների նախորդը: Ուստի և այդ յերկրորդ ժամանակաշրջանի պատմութիւնն իր կոնկրետ արտահայտութիւնն և ստանում առանձին պետութիւնների պատմութեան, թագավորական իշխանութեան զարգացման և ուժեղացման մեջ, վորը լիկվիդացիայի յե յենթարկում նախորդող ժամանակաշրջանի քաղաքական հարաբերութիւններում յեղած «համընդհանուր խառնաշփոթութիւնը» ուստի և հանդիսանում է «կազմավորվող պղպի ներկայացուցիչը ի հակադրութիւն խռովարար վասսալային պետութիւնների մանրատվելու»: (Ենդելս, հատ. XVI մ. 1. էջ 445):

